101

1. Երբ որ Նա ամպերով վերադառնա,
Իմ աչքերով պիտի Նրա դեմքին նայեմ,
Ուրախությամբ և փառք տալով Աստծո Զավակին՝
Ամպերի մեջ դիմավորեմ:
Օ, ի՜նչ մեծ փառք է, ի՜նչ մեծ շնորհ է,
Երջանիկ հույս է Տիրոջ կողմից:

Ուրախ եմ, որքա՜ն ուրախ եմ,
Հիշելով այս մեծ հույսը՝ ցնծում եմ:

2. Ի՜նչ մեծ խնջույք է լինելու երկնքի մեջ,
Երբ որ բոլոր սուրբերը հավաքվեն,
Միասին պետք է փառաբանեն Աստծո Գառին,
Արժանի է ամեն փառքի:
Հարսը պատրաստ է, արի՜, Հիսուս Տեր,
Զարդարված հոգով սպասում է:

3. Ահա՛, Տերը գալու է բյուրավոր սուրբերով
Եվ հրեշտակների փողի ձայնով,
Հաստատելու է մի մեծ թագավորություն
Եվ խաղաղություն երկրի վրա:
Օ, ի՜նչ մեծ փառք է, ի՜նչ մեծ շնորհ է,
Երջանիկ հույս է Տիրոջ կողմից: